
**ՀԱՐԱՎԱՅԻՆ ՔՈՒՐԴԻՍՏԱՆԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՅՆ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ**

ՄՀՈՅԱՆ Շ. Խ.

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Նորագույն ժամանակաշրջանում Հարավային (իրաքյան) Քուրդիստանն առաջատար դեր է խաղացել և շարունակում է խաղալ քուրդ ժողովրդի ազգային ազատագրական շարժման մեջ: Ասվածը հաստատվում է Քուրդիստանի սույն հատվածի պայքարի ինչպես տևողությամբ ու համառ բնույթով, այնպես էլ նրա ձեռքբերումներով:

Անցյալ դարի 90-ական թվականների սկզբին Պարսից ծոցի շրջանում տեղի ունեցած հայտնի իրադարձությունները լուրջ անդրադարձումներ ունեցան նաև Հարավային Քուրդիստանի քաղաքական ու սոցիալական վիճակի վրա: Ընդ որում, քրդական հարցի միջազգայնացումը դարձավ նրա էվոլյուցիայի շատ էական գործոն: Վերջին մեկ տասնամյակի ընթացքում այստեղ տեղի են ունեցել կարևոր վերափոխումներ կյանքի բոլոր բնագավառներում:

Չնայած վերջին ժամանակներս Հարավային Քուրդիստանի մասին շատ է գրվել, հոդվածների և այլ նյութերի առատությունը չի ապահովում խնդրո առարկա հիմնահարցի շատ թե քիչ հիմնովին լուսաբանումը, արդի վիճակի ամբողջական բնութագիրը և զարգացման միտումները: Թեմային վերաբերող հրապարակումների զգալի մասին հատկանշական են երկու էական թերություններ՝ քաղաքական նկատառումներով խիստ արտահայտված կողմնակալությունը և հիմնահարցը ծնող ու սնող գործոնների անտեսումը:

Ամենից առաջ հարկ է ուշադրություն հրավիրել Քուրդիստանի մյուս հատվածների համեմատությամբ Հարավային Քուրդիստանի մի առանձնահատկության վրա: Քրդերի ազգային ինքնորոշման հիմնահարցը ժամանակագրական առումով իրաքյան պետության հասակակիցն է, որը ստեղծվեց անցյալ դարի 20-ական թվականների սկզբին՝ Օսմանյան կայսրության փլատակների վրա: Որպես կայսրության ճնշված ժողովուրդներից մեկը, քրդերը քաղաքական-դիվանագիտական և զինված պայքարի միջոցով համառորեն պայքարում էին ազգային ազատագրության համար: Այսպես, Մահմուդ Բարզինջիի գլխավորած ազգային շարժումը Հարավային Քուրդիստանում (ընդմիջումներով) տևեց 1918-1930 թթ.: Հետագայում ազգային ազատագրության համար պայքարը կապված է հիմնականում Բարզանիների հայտնի տոհմի ներկայացուցիչների՝ մասնավորապես, Մուստաֆա Բարզանու անվան հետ: Թեև արտաքին ու ներքին մի շարք պատճառներով այդ շարժումները պարտության մատնվեցին, այնուհանդերձ, դրանք անհետևանք չմնացին և որոշակի դեր ունեցան

Հարավային Քուրդիստանի (նախկին Մոսուլի վիլայեթի) ճակատագրի որոշման մեջ:

Քաղաքական-դիվանագիտական և ռազմական հակամարտությունը մի կողմից քեմալական Թուրքիայի (որը ձգտում է Մոսուլի վիլայեթը վերադարձնել Թուրքիային), մյուս կողմից Մեծ Բրիտանիայի ու նրա մանդատի տակ գտնվող Իրաքի միջև ավարտվեց նրանով, որ Ազգերի լիգայի խորհուրդը որոշեց Մոսուլի վիլայեթը (Հարավային Քուրդիստանը) թողնել իրաքյան նորաստեղծ պետության կազմի մեջ: Սակայն Մոսուլի վիլայեթը Իրաքի կազմի մեջ մտցնելու մասին որոշումն ուղեկցվում էր վերապահումով այն մասին, որ այդ նորաստեղծ պետության մեջ անհրաժեշտ է ստեղծել քրդերի ազգային իրավունքները հաշվի առնող պայմաններ: 1926 թ. Իրաքի վարչապետը այդ հարցի մասին խորհրդարանում հայտարարեց. «Մենք պարտավոր ենք ճանաչել քրդերի ազգային իրավունքները»¹: Այնուհետև, Իրաքի բոլոր նախարարությունները համապատասխան հրահանգներ ստացան Ազգերի լիգայի խորհրդի սույն պահանջը իրականացնելու մասին²: Սակայն Բաղդադը չկատարեց իր խոստումը և այդ ուղղությամբ ձեռնարկված քայլերը ձևական բնույթ էին կրում:

Ուշագրավ է, որ քրդական ազգային-ազատագրական շարժման ղեկավարները հետագայում բազմիցս դիմումներ էին հղում Ազգերի լիգային՝ Իրաքում քրդերի ազգային իրավունքների ոտնահարման և այս խնդրի վերաբերյալ Ազգերի լիգայի պահանջներն անտեսելու մասին:

Հարկ է նշել, որ քրդական հարցում իրաքյան կառավարության ուխտադրությունը շարունակվեց նաև հետագայում: Հայտնի է, օրինակ, որ 1943 թ. Մուստաֆա Բարզանու գլխավորած քրդական ապստամբության ճնշման տակ կառավարությունը հարկադրված եղավ համաձայնագիր կնքել քրդերի հետ, որի հիմքում ընկած էր քրդական ներքին ինքնավարությունը ճանաչելու նախապայմանը: Սակայն կառավարությունը չկատարեց համաձայնագրի պահանջները: Այն օգտագործվեց որպես ժամանակ շահելու միջոց՝ ուժերն ի մի բերելու և զենքի ուժով շարժումը ճնշելու համար: Քրդական ազգային շարժման նկատմամբ տակտիկական այս գիծը շարունակվեց նաև բախտորոշ 1970 թ.:

1970 թ. քրդական ազգային շարժումն Իրաքում հասավ աննախադեպ հաղթանակի: Անգոր գտնվելով զենքի ուժով ճնշելու 1961 թ. սկսված զենեքավ Մուստաֆա Բարզանու ղեկավարությամբ ինքնավարական շարժումը՝ Իրաքի կառավարությունը հարկադրված եղավ բանակցությունների մեջ մտնել քրդական կողմի հետ, որի շնորհիվ հրապարակ ելավ պատմական նշանակություն ունեցող 1970 թ. մարտի 11-ի համաձայնագիրը, որը բավարարում էր քրդերի գրեթե բոլոր պահանջներն ազգային ինքնավարության մասին: Ինքնավարության մասին օրենքի մշակման և նրա ամբողջական իրականացման համար սահմանվեց 4-ամյա ժամկետ: Սակայն քրդերի ինքնավարության մասին 1970 թ. մարտի 11-ի համաձայնագիրը այն աստիճան սեղմվեց ու սահմանափակվեց, որ հասցրեց զինված նոր առճակատման կառավարության և քրդերի միջև: Կառավարությանն

¹ *Мгох III. X., Курдский национальный вопрос в Ираке в новейшее время, М., 1991, с. 53.*

² Նույն տեղում:

այս անգամ հաջողվեց կոտրել քրդերի դիմադրությունը, քանզի ինքնավարության օրենքի մշակման համար տրված ժամկետն օգտագործվեց ուժերն ի մի բերելու և քրդերին իր պայմաններով սահմանափակ ինքնավարություն պարտադրելու համար: Այս գործում, անտարակույս, որոշակի դեր ունեցավ նաև կառավարող վարչախմբի հոչակած, այսպես կոչված, «սոցիալիստական կողմնորոշման» կարգախոսը, որն օգտագործվեց ԽՍՀՄ-ի և սոցիալիստական երկրների հետ մերձեցման և նրանց աջակցությունը ստանալու համար: Նոր պայմաններում Բաղդադը քրդական հարցի լուծման գործում խոսում էր ուժի դիրքերից:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ երկար ժամանակաշրջանում քրդական ազգային ուժերի և կառավարության միջև կոնֆլիկտների պատճառներից մեկը կառավարող վարչախմբի ուխտադրությունն էր, այն պայմանավորվածությունների ոտնահարումը, որոնք զինված կոնֆլիկտներից հետո ձեռք էին բերվում խաղաղ բանակցությունների միջոցով: Ահա թե ինչու ժամանակակից փուլում Իրաքում քրդական հարցի կարգավորումը և գոյություն ունեցող ինքնավարության ապահովությունն անհրաժեշտաբար թելադրում են միջազգային երաշխիքների սահմանում:

Չնայած Քուրդիստանը բաժանած երկրներում քրդերի վիճակի ընդհանուր առմամբ նույնականությանը, Իրաքում քրդերի վիճակն ունի իր յուրօրինակությունը: Այն արտահայտվում է նրանում, որ Օսմանյան կայսրության քայքայումից հետո, երբ օրակարգի հարց էր դարձել կայսրության մի շարք ճնշված ժողովուրդների ճակատագրի հարցը, Հարավային Քուրդիստանը մտցվեց նորաստեղծ Իրաքի պետության կազմի մեջ ոչ թե անվերապահորեն, այլ պայմանով, որ կհարգվեն քրդերի ազգային իրավունքները, սա առաջին, և, երկրորդ, 1920-ական թվականների սկզբից սկսված ազգային ազատագրական պայքարի գործընթացում քրդերը փաստորեն ճանաչվում էին որպես սուբյեկտ, տեղի ունեցած բանակցություններ մեջ կողմ՝ կառավարության հետ իրենց պահանջների բավարարման համար: Հանգամանք, որ բացակայում էր մասնատված Քուրդիստանի մյուս հատվածներում: Այսպիսի ոչ հասարակ «պատմական բեռով» Բաղդադը և քրդերը մտան XXդ. 90-ական թվականների բախտորոշ իրադարձությունների հորձանուտը:

Պարսից ծոցի շրջանում 1991 թ. սկիզբ առած իրադարձություններն էսպես փոխեցին տարածաշրջանի իրադրությունը և, բնականաբար, ազդեցին Իրաքում քրդական հիմնահարցի էվոյուցիայի վրա: 1991 թ. հունվարին «Փոթորիկ անապատում» կոչված պատերազմում Սադամ Հուսեյնի վարչախմբի պարտությունից հետո բռնկվեց քրդական համաժողովրդական ապստամբություն, որի շնորհիվ ազատագրվեց գրեթե ողջ իրաքյան Քուրդիստանը: Դա սուր տագնապի մատնեց Քուրդիստանը բաժանած պետություններին, և հետագա դեպքերն ընդունեցին դրամատիկ բնույթ:

Հակառակ ամերիկացիների և նրանց դաշնակիցների հայտարարած երաշխիքների, որ իրենք կապահովեն Իրաքի հյուսիսի (քրդերի) և հարավի (շիաների) անվտանգությունը, Մադամի վարչախումբն անարգել սկսեց քրդերի դեմ զանգվածային պատժարշավ, որի շնորհիվ նա վերահաստատեց իր իշխանությունը

քրդական շրջաններում: Գրվեց քրդական պատմության ամենասև էջերից մեկը: ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների հետ պատերազմում պարտություն կրած բռնապետը ձգտում էր իր երկրի ժողովրդի մի մասի նկատմամբ տարած «հաղթարշավով» ինչ-որ չափով վերականգնել իր սասանված դիրքը: Երկու և կես միլիոն քրդեր ցեղասպանության սպառնալիքի տակ թողեցին իրենց բնակավայրերն ու ունեցվածքը և շարժվեցին դեպի իրանական և թուրքական Քուրդիստանի սահմանները: 180 հազար քրդեր՝ առավելապես կանայք, երեխաներ և ծերեր, զոհվեցին սովից և ցրտից: Քրդական գրեթե բոլոր քաղաքներն ու գյուղերը ենթարկվեցին զանգվածային թալանի ու կողոպուտի: Քրդերի հետ զանգվածային հաշվեհարդարը համաշխարհային մասշտաբով առաջ բերեց բողոքի ու զայրույթի ալիք: ԱՄՆ-ի պրեզիդենտ Բուշի կառավարությունը Եվրոպայում և բուն Ամերիկայում մեղադրվեց քրդերին դավաճանելու մեջ:

Այս պայմաններում Մեծ Բրիտանիայի կառավարությունը Գերմանիայի և Ֆրանսիայի կառավարությունների համաձայնությամբ հանդես եկավ մի նախաձեռնությամբ (հավանաբար, ոչ առանց ԱՄՆ-ի համաձայնության), ըստ որի, պետք է ապահովվեր տեղահան արված քրդերի վերադարձն իրենց բնակավայրերը և անվտանգությունը՝ հնարավորություն ընձեռելով օգտվելու իրենց ինքնավարության իրավունքից: Դրան հետևեց Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի N 688 որոշումն այն մասին, որ 36-րդ զուգահեռականից հյուսիս գտնվող քրդական տարածքը պաշտպանվում է հիշյալ երկրների, այսպես կոչված, արագ օգնության հասնող ուժերի կողմից: Հարավային Քուրդիստանն այս ամենի հիմամբ թեև կոխեց զարգացման մի յուրահատուկ ժամանակաշրջան:

1992 թ. մայիսի 19-ին Հարավային Քուրդիստանում տեղի ունեցան ազատ ընտրություններ, որոնց շնորհիվ ստեղծված խորհրդարանը և ազգային կառավարությունը տնտեսական փլուզման, կառավարման համակարգի, կրթության և առողջապահության համակարգի լուծարման և, վերջապես, երկակի շրջափակման ու հարևան շահագրգռված պետությունների խարդավանքների ու քայքայիչ գործունեության պայմաններում մի շարք քայլեր ձեռնարկեցին ազգային պետական համակարգի ստեղծման և երկրամասի սոցիալ-տնտեսական կյանքը կարգի բերելու ուղղությամբ:

Ազգային ինքնավարության պետական համակարգի ստեղծումը և քայքայված տնտեսության, առողջապահական ու կրթական համակարգի վերականգնման, ժողովրդի բնակարանային և աշխատանքային պայմանների բարելավմանն ուղղված ջանքերը տեղի էին ունենում բարդ պայմաններում: 1992 թ. քրդական խորհրդարանի, այնուհետև կառավարության ստեղծումից անմիջապես հետո Թուրքիայի, Իրանի և Միջին արտաքին գործերի նախարարները, քննարկելով «Իրաքի հյուսիսի մասին» հարցը, հրապարակեցին մի հայտարարություն, ըստ որի, հանդես էին գալիս «իրաքյան պետության մասնատման դեմ»: Պաշտոնապես հայտարարվեց, որ հիշյալ երկրների արտաքին գործերի նախարարները երեք ամիսը մեկ հանդիպելու են՝ քննարկելու «Իրաքի հյուսիսի» դեպքերի զարգացման մասին հարցը: Այդ այն դեպքում, երբ Իրաքյան Քուր-

դիստանի խորհրդարանի և կառավարության հայտարարությունների մեջ շեշտվում էր, որ իրենք «իրաքյան պետության կազմից դուրս գալու պահանջ չեն դնում և ձգտում են հասնել քրդերի ազգային իրավունքների ճանաչմանն իրաքյան դաշնակցային պետության մեջ»:

«Իրենց քրդերի» վրա իրաքյան Քուրդիստանում տեղի ունեցող իրադարձությունների ազդեցության մտահոգությամբ հարևան պետությունները դիմեցին մի շարք քայլերի, որոնք կոչված էին խափանելու քրդերի ինքնորոշման գործընթացն Իրաքում:

Քրդական «ազատագրված կղզակի» սոցիալ-քաղաքական կյանքի կարգավորումը, իրավիճակը կայունացնելու քրդական ինքնավար իշխանությունների ջանքերը բարդանում էին երկակի շրջափակմամբ, Քուրդիստանի դեմոկրատական կուսակցության (ՔԴԿ) և Քուրդիստանի հայրենասիրական միության (ՔՀՄ) 1994-1998 թթ. տեղի ունեցած միջքրդական կոնֆլիկտով, Քուրդիստանի աշխատավորական կուսակցության (ՔԱԿ) անընդմեջ քայքայիչ գործունեությամբ ՔԴԿ-ի, իսկ հետո իր դաշնակցի՝ ՔՀՄ-ի հետ նրա զինված ընդհարումներով (ըստ երևույթին, ոչ պատահականորեն ուղեկցվելով Իրաքյան Քուրդիստանի սահմանները թուրքական զինված ուժերի ներխուժումներով), հարևան պետությունների հատուկ ծառայությունների ծավալած քայքայիչ գործողություններով: Այս և մի շարք այլ ներքին և արտաքին գործոններ խիստ բարդացնում են ինքնավար պետական մարմինների գործունեությունը:

Ահա այսպիսի պայմաններում բոլորեց Իրաքյան Քուրդիստանի փաստական ինքնավարության տասը տարին: Թեև այս ժամանակաշրջանը մեծ չէ մի տարածաշրջանի վերափոխման համար, որը ենթարկվել էր ահավոր ավերածությունների և ժողովրդագրական կազմի ձևախեղման, սակայն այն ի վիճակի էր ցուցադրելու երկրամասի սոցիալ-տնտեսական և քաղաքական հարցերի լուծման մարզում քրդական իշխանությունների կարողությունները և քաղաքական գծի արդյունավետությունը:

Հակաքրդական քաղաքականություն իրականացնող հարևան պետությունները, մասնավորապես՝ Թուրքիան, փութաջանորեն գործի դրեցին Իրաքում քրդական ինքնավարության գործընթացը խաթարելու ամեն կարգի միջոցներ՝ ռազմական, քաղաքական, դիվանագիտական, ներքին քայքայիչ ձեռնարկումներ: Քարոզվում էր այն գաղափարը, որ «Իրաքի հյուսիսում» ստեղծվում է «նոր Աֆղանստան»՝ տարածաշրջանի համար տագնապալի հետևանքներով, և, երկրորդ, որ իբր, քրդերը ի վիճակի չեն ստեղծելու ինքնակառավարման արդյունավետ համակարգ, քանզի դրա համար չունեն ոչ փորձ, ոչ հնարավորություններ:

Այս տեսակետից քրդական ինքնավարական շարժման ղեկավարներին սպասվում էր դժվարին փորձաշրջան՝ ապացուցելու իրենց կարողությունը տևական պատերազմներից քայքայված տարածաշրջանում կարգ ու կանոն ստեղծելու ուղղությամբ:

Հարավային Քուրդիստանի բնատնտեսական կարողություններին և ազգային իշխանությունների ձեռնարկած միջոցառումներին վերաբերող տվյալները պատկերացում են տալիս խնդրո առարկա գործընթացի մասին:

Երկրամասի երկու հզոր էլեկտրակայանները, հազարավոր հեկտար խաղողի ինչպես նաև այլևայլ այգիները, հարթավայրային և նախալեռնային բերքառատ շրջանները, ամբողջ Իրաքի, ինչպես նաև արտահանման պահանջները բավարարող հացահատիկային կուլտուրաների տարածքները, բարձր համարում ունեցող և առավելապես արտահանվող բարձրորակ ծխախոտը և մի շարք այլ բարիքներ ի վիճակի եղան ապահովելու նրա բնակչության բարեկեցիկ կյանքը և տնտեսական զարգացումը: Ասվածին պետք է ավելացնել երկրամասի ընդերքի հարստությունները՝ նավթը, գազը, ծծումբը, տարբեր մետաղները, մարմարը և մի շարք այլ հանքանյութեր, որոնց մեծ մասը դեռևս մնում է չօգտագործված:

Երկրամասի տնտեսական վերականգնման և վերափոխությունների ծրագրում ազգային իշխանությունների հաջողությունների մասին առաջին տպավորությունը ստանում էս յուրաքանչյուր երկրի «այցետոմսից»՝ ճանապարհների վիճակից: Տեղի ունեցած արհավիրքներից հետո զարմանում էս, տեսնելով Քուրդիստանի ճանապարհների (հիմնականում ասֆալտապատ) միանգամայն բարվոք վիճակը. հները վերականգնված են, լայն թափով կառուցվում են նորերը, որոնք բավարարում են տրանսպորտի ժամանակակից պահանջները:

Ընդհանուր առմամբ, քրդական ինքնավար գոտում տեղի ունի իսկական շինարարական բում. այսպես 1992 թ. մինչ 2000 թ. կառուցվել է տարրական և միջնակարգ դպրոցների 940 շենք, բազմաթիվ հյուրանոցներ, ընդ որում, մի քանիսը «Շերատոն» տիպի, հիանալի մարզադաշտ՝ Էրբիլում (նմանը կառուցվում է Սուլեյմանիեում), եվրոպական շքեղությամբ և հարմարություններով սուպերմարկետ՝ Դեռկում, բազմաթիվ նոր հարմարավետ թանգարանային շենքեր: Հազարամյակների պատմություն ունեցող Էրբիլում առաջին անգամ կառուցվում է ջրմուղ-կոյուղու համակարգ:

Գործի են դրվել և աշխատում են բազմաթիվ մեծ և փոքր արդյունաբերական ձեռնարկություններ՝ ցեմենտի խոշոր գործարանը Սուլեյմանիեի մերձակայքում, ասֆալտի մի քանի գործարաններ, տեքստիլ արդյունաբերությունը՝ երկու խոշոր ֆաբրիկաներով՝ Էրբիլում և Սուլեյմանիեում, ծխախոտի մի քանի փայտամշակման բազմաթիվ ձեռնարկություններ, պահածոների և հանքային ջրերի գործարաններ: Միայն Սուլեյմանիեում աշխատում են 12 խոշոր գործարաններ ու ֆաբրիկաներ և 900 մանր ու միջին ձեռնարկություններ: Ներկայումս կառուցվում են բազմաթիվ այլ ձեռնարկություններ, որոնք աշխատում են տեղական հումքի հիման վրա:

Ծավալուն աշխատանք է կատարվում, այդ թվում և ՄԱԿ-ի մարմինների միջոցով, նոր էներգահամակարգերի ստեղծման ուղղությամբ, որոնք կոչված են վերացնելու էլեկտրաէներգիայի պակասը:

Հայտնի է, որ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը, ի բացառություն Իրաքի նկատմամբ սահմանված շրջափակման ռեժիմի, իր N 986 որոշմամբ թույլ էր տվել նավթի որոշակի քանակության վաճառք՝ երկրի բնակչությանը պարենով և դեղորայքով ապահովելու համար: Դրա 13 % -ը հատկացվում էր Քուրդիստանին:

Հիշյալ «Պարենով փոխարինվող նավթ» կոչված ծրագրի սահմաններում 311 միլիոն դոլար էր հատկացվել երկրամասի էներգահամակարգի վերակառուցման և էներգիայի անբավարարության խնդիրը լուծելու համար: Երկրամասի տնտեսական կյանքում զգալի դեր են խաղում միջին և մանր ձեռնարկությունները: Այսպես, Էրբիլի և Դհոկի նահանգներում արտոնագրված են և աշխատում են 1418 առևտրական ֆիրմաներ:

Ազգային իշխանությունները եռանդուն ջանքեր են գործադրում գյուղատնտեսական մթերքների արտադրանքի զարգացման համար: Վերացված է կառավարական զինված ուժերի կողմից քիմիական թունավոր նյութերի օգտագործման ահավոր հետևանքներից մեկը: Հայտնի է, որ դրա հետևանքով 1991 թ. 5 մլն. գլխաքանակի ոչխարների և այծերի հոտից մնացել էր ընդամենը 500 հազարը: Ներկայումս այդ հոտի գլխաքանակը հասել է 11 միլիոնի: Գործի են դրվել թոչնաբուծական մի քանի ֆաբրիկաներ: Այս ամենի շնորհիվ շուրջ 4 մլն. ազգաբնակչություն ունեցող երկրամասում լիովին բավարարված է մսի պահանջը:

1994 թ. մինչև 2000 թ. երեք նահանգներում (Էրբիլ, Սուլեյմանիե, Դհոկ) փորված է 200 արտեզյան ջրհոր, արտասահմանից ձեռք է բերված գյուղատնտեսական մեծ քանակության տեխնիկա:

Մեծ միջոցներ են տրամադրվում անտառային զանգվածների վերականգնման համար, որոնք ոչնչացված էին ռմբակոծությունների, ինչպես նաև որպես վառելիք բնակչության կողմից օգտագործելու հետևանքով:

Աննախադեպ զարգացում է ապրում կրթական և մշակութային կյանքը:

Հարկ է մատնանշել, որ քրդական «ազատ կոլլեկտիվ» կրթության մարզում գոյություն ունի մի իրավիճակ, որի նմանը չկա ոչ միայն մասնատված Քուրդիստանի մյուս հատվածներում, այլև հարևան ոչ քրդական ազգաբնակչությամբ շրջաններում: Խոսքն այն մասին է, որ ներկայումս քրդական յուրաքանչյուր գյուղ ունի իր դպրոցը և, որ կարևոր է, 1-6 դասարանի կրթությունը պարտադիր է: Կրթական գործի դրությունը բնութագրվում է հետևյալ ուշագրավ թվերով. վերջին երկու տարիների ընթացքում Էրբիլի և Դհոկի նահանգներում կառուցվել է 298 դպրոցական շենք, 1992 մինչև 2000 թվականը Սուլեյմանիե նահանգի և Կիրկուկի նահանգի քրդական իշխանությունների իրավասության տակ գտնվող շրջաններում կառուցվել է դպրոցական 642 շենք, որտեղ ներկայումս աշխատում է 1974 ուսուցիչ: Երկրամասի վերը հիշատակված երեք նահանգների դպրոցներում սովորում են շուրջ 900 հազար երեխաներ: Դպրոցների զգալի մասը ապահովված է ժամանակակից համակարգիչներով: Էրբիլում գործում են համակարգչային կենտրոն և մի քանի հրատարակչություններ, որոնք իրականացնում են դասագրքերի և ուսումնադաստիարակչական գրականության ու ծրագրերի տպագրությունը: Հիշատակության արժանի է այն փաստը, որ կրթությունը բոլոր մակարդակներում ձրի է:

Հարավային Քուրդիստանում գործում են երեք համալսարաններ, Սալահեդդինի՝ 12000, Սուլեյմանիե՝ 6500 և Դհոկի՝ 2600 ուսանողներով: Նշված համալսարանները ընդհանուր առմամբ ապահովված են բարձրորակ մասնագետներով, որոնց մի մասը մասնագիտական որակավորում է ստացել ԽՍՀՄ-ում, եվրոպական երկրներում և ԱՄՆ-ում, գոյություն ունեն ամենատարբեր

մասնագիտությունների բազմաթիվ քոլեջներ: Վերը նշված երեք համալսարանները մտնում են Համալսարանների միջազգային ասոցիացիայի մեջ: Ներկայումս երկրամասի երեք նահանգներում հրատարակվում է ավելի քան 150 անուն թերթ և ամսագիր, որոնք արտահայտում են հասարակական-քաղաքական բոլոր հոսանքների տեսակետները: Այս բազմակարծությունը արտահայտված է նաև քրդական հեռուստատեսության ծրագրերում, որի հնարավորություններից օգտվում են քաղաքական բոլոր կուսակցությունները: Աննախադեպ վերելք են ապրում թատերական կյանքն ու կինոարվեստը, քաջալերվում է ժողովրդական արվեստների և, առհասարակ, արժեքների զարգացումը: Մշակութային կյանքի մեջ առանձնահատուկ տեղ են գրավում գեղանկարչական ցուցահանդեսները, փառատոները և այլն: Կառավարությունն սկսել է ժամանակակից տեխնիկական հագեցվածությամբ խոշոր կինոստուդիայի կառուցումը Էրբիլում:

Ուշագրավ են քուրդ-արաբական մշակութային կապերի զարգացման մարզում ձեռնարկած միջոցառումները:

2000 թ. իրականացվեցին արաբ մեծ պոետ և հումանիստ Մուհամեդ Մահդի ալ-Ջավահիրիի ծննդյան 100-ամյակին նվիրված հանդիսությունները: Դրանց մասնակցեցին ոչ միայն քրդական մտավորականության ներկայացուցիչներ, այլև գրողներ, բանաստեղծներ, արվեստագետներ, հասարակական գործիչներ բազմաթիվ արաբական երկրներից: Էրբիլում և Սուլեյմանիեում կանգնեցված են ալ-Ջավահիրիի՝ Իտալիայում ձուլված բրոնզե արձանները: Նշվածին հաջորդեց միջազգային գիտական նստաշրջանը, որը նվիրված էր քրդական միջնադարյան դասական պոեզիայի ակննավոր ներկայացուցիչ Մելայե Ջզիրիի ստեղծագործությանը: Նստաշրջանում պոետի ստեղծագործության մասին զեկուցումով հանդես եկավ ՔԴԿ-ի նախագահ Մասուդ Բարզանին:

Հանգստի և մշակույթի բացառիկ կենտրոն է Էրբիլի Մուստաֆա Բարզանու անվան ընդարձակ պարկը: Այստեղ կառուցվում է ռադիո-հեռուստատեսային աշտարակ՝ 205մ բարձրությամբ, տարբեր նշանակության մի շարք հարմարություններով:

Ազգային կառավարությունը խրախուսում է բնակչության հանգստի և մշակութային կյանքի հարստացմանն ուղղված նախաձեռնությունները: Գործում են դպրոցներ ազգային փոքրամասնությունների՝ ասորիների, թուրքմենների և մյուսների համար: Ուշադիր վերաբերմունք է ցուցաբերվում կրոնադավանաբանական փոքրամասնություններին: Էրբիլի մերձակայքում՝ Անքավայում գործում է բարեկարգ ու գեղեցիկ Խալեյ քրիստոնյաների եկեղեցին: Բոլորովին վերջերս կառուցվեց քրիստոնեական նոր եկեղեցի Բեդիալ գյուղում, որի բացմանը ներկա գտնվեց վարչապետ Նեջիրվան Բարզանին:

Ուշագրավ է եզդիների հավատակարգի նկատմամբ քաղաքականությունը: Եզդիզմը՝ քրդերի նախախաղածական կրոնը, ազգային իշխանությունների հոգատարության առարկան է: Դրա առաջին վկայությունը դեպի եզդիական գլխավոր սրբավայր՝ Լալեշ տանող ճանապարհի վերակառուցումն ու միանգամայն բարեկարգ վիճակն է: Շատ հատկանշական է, որ ներկայումս ոչ միայն անհետացել է կրոնադավանական գործոնների հիմամբ քուրդ-եզդիական անվատահությունը և երբեմնի թշնամանքը: Դեռևս գործում է եզդիների հավա-

տակարգի և մշակույթի շքեղ կահավորված տունը: Ուշադրության է արժանի հետևյալ առաջարկ-նախաձեռնությունը: Լալեշ այցելած բաղդադցի մի մեծահարուստ մահմեդական քուրդ առաջարկել էր մեծ ներդրումներ կատարել Լալեշի բարեկարգման և ուխտավորների սպասարկման մի ամբողջ համակարգ կառուցելու գործի մեջ: Նման կարգի ծրագիր է մշակում կառավարությունը: Այժմ դպրոցներում անցնում են եզիդիզմի ուսումնասիրության դասեր, իսկ գյուղերում եզիդի շեյխերը իրենց կրոնական ծառայությունների համար ստանում են պետականորեն սահմանված աշխատավարձ:

Արմատապես բարելավվել է առողջապահության գործի դրվածքը: Այսպես, Էրբիլի նահանգում մինչև 1991 թ. գործում էին 7 հիվանդանոց, այժմ՝ 37, պոլիկլինիկաներ՝ համապատասխանաբար 27 և 277: Սուլեյմանիեի նահանգում այդ նույն ժամանակաշրջանում նախկին 2 հիվանդանոցների փոխարեն այժմ գործում են 11-ը, նախկինում կար 59 պոլիկլինիկա, այժմ նահանգում գործում է 343-ը, որտեղ աշխատում են տարբեր մասնագիտության 564 բժիշկ:

Ազգային իշխանությունների օրոք զգալիորեն աճել է ծննդաբերության մակարդակը, իջել մահացության տոկոսը, որը մի կողմից բնակչության բարեկեցության, մյուս կողմից բուժապասարկման գործի բարելավման արդյունք է: Երկրամասում առողջապահության ցուցանիշները առավելություն ունեն ինչպես Իրաքի միջին և հարավային շրջանների, այնպես էլ հարևան երկրների նկատմամբ: Այստեղ բժիշկների աշխատավարձը մի քանի անգամ բարձր է Իրաքի բժիշկների աշխատավարձից:

«Ազատագրված կղզյակի» նվաճումները հասարակական-քաղաքական և տնտեսական մարզում տպավորիչ են: Սակայն ընդհանուր առմամբ Հարավային Քուրդիստանի հասարակական-քաղաքական կյանքը հանդարտ ու հասարակ չէ և կրում է անցման ժամանակաշրջանի բնորոշ գծերը՝ իրենց դրական և բացասական դրսևորումներով:

Ազգային ազատագրական շարժումների պատմությունից հայտնի է, որ անցումը հեղափոխական ազգային պայքարից խաղաղ և հատկապես վերակառուցումների գործընթացին, կապված է մի շարք բարդությունների հետ, ինչպես ներքին, այնպես էլ արտաքին բնույթի: Եթե ի նկատի ունենանք, որ օբյեկտիվորեն Իրաքի քրդերի ազգային ժողովրդավարական պայքարը կազմում է համաքրդական ազատագրական պայքարի բաղկացուցիչ մասը՝ իր ներքին և արտաքին մի շարք բարդություններով, ապա պարզ կդառնան նրա դժվարությունները, հատկապես զարգացման ժամանակակից վճռորոշ փուլում:

Այս տեսակետից երկրամասի կարևորագույն ձեռքբերումների թվին պետք է դասել ազգային պետական համակարգի ստեղծումը և նրա բնականոն գործունեության ապահովումը: Նշենք այս առնչությամբ, որ 1991 թ. վերջին և 1992 թ. սկզբին Բաղդադի կառավարությունը միանգամից հետ կանչեց Քուրդիստանի պետական իշխանությունների բարձր աստիճանավորներին՝ ճգնաժամային իրավիճակ ստեղծելու և տնտեսական ու քաղաքական կյանքը խաթարելու մտադրությամբ: Այս իրադրության մեջ ՔԴԿ-ի, ՔՀՄ-ի և քրդական ժողովրդավար այլ ուժերի ջանքերով ստեղծվեցին ազգային իշխանության նոր մարմիններ: Կարևոր է ընդգծել, որ պետական այս կառույցները կազմավորվեցին

ժողովրդավարական սկզբունքների հիմամբ, որոնք ի ղեկավարություն էին ընդունվել քրդական քաղաքական գրեթե բոլոր կուսակցությունների և կազմակերպությունների կողմից: Երբիլում շքեղ և ժամանակակից սարքավորումներով հագեցված կառույցներում աշխատում են խորհրդարանն ու կառավարությունը: 1992 թվականից գործող (որոշ ընդմիջումներով՝ կապված միջկուսակցական կոնֆլիկտի հետ՝ ՔԴԿ-ի ՔՀՄ-ի միջև) խորհրդարանն ունի 10 կոմիտե, որոնք վերահսկում են համապատասխան նախարարությունների գործունեությունը: Ցարդ խորհրդարանն ընդունել է ավելի քան 100 օրենքներ, որոնք կարգավորում են գոտու հասարակական-քաղաքական և տնտեսական կյանքը:

Դժբախտաբար, 1994 թ. սկսված զինված կոնֆլիկտը ՔԴԿ-ի և ՔՀՄ-ի միջև պառակտեց ազգային ուժերը: Դրա հետևանքներից մեկն եղավ այն, որ Սուլեյմանիեում ՔՀՄ-ը կազմեց զուգահեռ կառավարություն՝ իր կառույցներով և ազդեցության շրջաններով:

1998 թ. սեպտեմբերին ԱՄՆ-ի միջնորդությամբ ՔԴԿ-ի և ՔՀՄ-ի միջև Վաշինգտոնում ձեռք բերվեց հաշտության համաձայնագիր, որի հիմքում ընկած էր զինուժը որպես վիճելի հարցերի լուծման միջոց բացառելու և բոլոր հարցերը խաղաղ մեթոդներով կարգավորելու սկզբունքը: Այդ համաձայնագրով նախատեսվում էր խորհրդարանական նոր ընտրությունների անցկացում, նոր կառավարության ստեղծում և բոլոր կարգի հարցերը բացառապես խաղաղ կերպով լուծելու անհրաժեշտությունը: Մինչև 2000 թ. վերջը ՔԴԿ-ի և ՔՀՄ-ի պատվիրակությունների միջև տեղի էր ունեցել 55 հանդիպում, որոնց ընթացքում դանդաղ, բայց վերընթաց ծավալվում էր ազգային միասնությունն ապահովելու և ինքնավարության առաքելությունը իրականացնելու գործը:

ՔԴԿ-ի և ՔՀՄ-ի միջև կոնֆլիկտն ուներ երկարատև ու բարդ բնույթ: Այդ կուսակցությունների միասնական պայքարին խանգարում էին ինչպես կոնֆլիկտի երկարաժամկետ, մանր նստվածքները, փոխադարձ անվստահությունը, այնպես էլ հարևան շահագրգռված պետությունների ջանքերը միջքրդական պայքարի հրահրման գործում: Ինչպես Հարավային Քուրդիստանում, այնպես էլ համաքրդական ծավալով ձևավորվում էր ամեն գնով ազգային ուժերի միասնության ապահովման գաղափարը, որին ակնհայտորեն հակվում էին հակամարտության մեջ գտնվող կողմերը: Նման պարագաների առկայությամբ, 2001 թ. հունվարին Սալահեդդինում տեղի ունեցավ ՔՀՄ-ի գլխավոր քարտուղար Ջալալ Թալաբանիի հանդիպումը ՔԴԿ-ի նախագահ Մասուդ Բարզանիի հետ. երկու կուսակցությունների պարագլուխները հայտնեցին ազգային պառակտվածության վերացման գործում իրենց միահամուռ կամքի մասին: Դրան հաջորդեցին երկու կուսակցությունների բարձր մակարդակի պատվիրակությունների մի շարք հանդիպումներ, որոնց ընթացքում քայլ առ քայլ վերացվում են ազգային միասնության ճանապարհին եղած արգելքները: Կանխագծվել են միասնական ազգային կառավարման մարմինների ստեղծման պլանները:

2001 թ. մայիսի 26-ին Երբիլի և Դհուկի նահանգներում տեղի ունեցան տեղական կառավարման իշխանությունների ժողովրդավարական ազատ ընտրություններ: Այս ընտրությունների ընթացքում համոզիչ հաղթանակ տարավ ՔԴԿ-ն, որը ներկայումս ամենաազդեցիկ քաղաքական ուժն է: Նշենք նաև, որ 1999

թ. նման կարգի ընտրություններ տեղի ունեցան Սուլեյմանիեի նահանգում, որտեղ տեղական իշխանություններում մեծամասնությունը պատկանում է ՔՀՄ-ին:

Ընտրովի պետական իշխանությունների ստեղծումը, քաղաքական կուսակցությունների ազատ գործունեության ապահովումը, մամուլի և լրատվության էլեկտրոնային միջոցների ազատությունը, ազգամիջյան կոնֆլիկտների բացակայությունը և ազգային ու կրոնական փոքրամասնությունների իրավունքների հարգումը բարենպաստ պայմաններ ստեղծեցին Հարավային Քուրդիստանի հաջողությունների միջազգային ճանաչման համար:

Վերը նշվածով է բացատրվում այն ուշագրավ փաստը, որ Հարավային Քուրդիստանը ներկայումս ունի բավական լայն միջազգային կապեր: ՔԴԿ-ն և ՔՀՄ-ն ունեն իրենց պաշտոնական ներկայացուցչությունները Եվրոպայի, Ամերիկայի, Աֆրիկայի շատ երկրներում, այդ թվում՝ Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Իսպանիայում, Ռուսաստանում, Ավստրիայում, ԱՄՆ-ում, Եգիպտոսում, Թուրքիայում, Իրանում, Սիրիայում և այլն:

Հարավային Քուրդիստանի ձեռք բերած նվաճումները աննկատ չեն մնացել միջազգային ասպարեզում: Հատկանշական են այս տեսակետից արտասահմանյան բազմաթիվ դիտորդների հայտարարություններն այն մասին, որ դեմոկրատական ազատությունների մակարդակով և բնակչության բարեկեցության ապահովման ուղղությամբ Հարավային Քուրդիստանը գերազանցում է Իրաքը և հարևան երկրները: Այդ իրողությունը հարկադրված են ընդունել Քուրդիստանը բաժանած պետությունների ղեկավարները: Այսպես, չթաքցնելով իր թշնամանքը այստեղ տեղի ունեցող գործընթացների նկատմամբ, Թուրքիայի նախկին վարչապետ Բյուլենտ Էջեվիտը, միաժամանակ, պետք է խոստովաներ, որ «Ցավոք, Հյուսիսային Իրաքի շրջանը (Հարավային Քուրդիստանը,- Մ. Շ.) ներկայումս Մերձավոր արևելքի ամենադեմոկրատական շրջանն է»: Քրդական ինքնավար շրջանի քաղաքական կարևորագույն հաջողություններից մեկն այն է, որ նրա կողմից որպես քրդական հարցի լուծման համար առաջադրված՝ Իրաքի պետության ֆեդերատիվ կառուցվածքի գաղափարը ներկայումս հավանության է արժանացել Արևմուտքում (ԱՄՆ, Անգլիա, Ֆրանսիա, Գերմանիա, Շվեդիա, Իսպանիա և այլն) և Արևելքում (Լիբիա, Եգիպտոս, Հորդանան):

2003 թ. մարտին երկար նախապատրաստությունից հետո ԱՄՆ-ի գլխավորած կոալիցիան պատերազմ հայտարարեց Սադամ Հուսեյնի ռեժիմին և կարճ ժամանակում տապալեց այն: Հիշյալ պարագան էապես փոխեց տարածաշրջանի քաղաքական, դիվանագիտական և ռազմական իրավիճակը: Այն պարունակում է բազմաբնույթ հիմնահարցերի մի ամբողջություն, որի վերլուծությունը դուրս է սույն հոդվածի առաջադրանքից:

Բաղդադի բռնատիրական ռեժիմի տապալումը և դրա հետևանքով ստեղծված իրավիճակը, ըստ էության, նշանավորեցին քրդական հիմնահարցի զարգացման նոր փուլ: Գլխավորն այն էր, որ տապալվեց այն վարչակարգը, որը երկար տարիներ անպատիժ սրի էր մատնում քրդական ինքնավարության մասնակիցներին, իրագործում էր ցեղասպանության ակտեր խաղաղ բնակչության նկատմամբ: Հարկ է նշել, որ պատերազմի նախօրեին քրդական ազգային ուժերը ճշգրտեցին իրենց կեցվածքը վերահաս իրադարձությունների նկատմամբ: ՔԴԿ-ի

և ՔՀՄ-ի ղեկավարությունները համաձայնության եկան միասնական պառլամենտի վերականգնման մասին: Երկու վարչակարգերի (Էրբիլի և Մուլեյմանիեի) զինված ուժերը դրվեցին մեկ ընդհանուր հրամանատարության ներքո: Որոշվեց վեցամսյա ժամկետում նախապատրաստել և անցկացնել խորհրդարանական ընտրություններ և կազմել նոր կառավարություն: Արդեն պատերազմի ավարտից հետո ստեղծվեց միասնական կառավարության Նեջիրվան Բարզանու գլխավորությամբ:

Տեղի ունեցան քրդական հիմնահարցի համար կարևոր նշանակություն ունեցող արտաքին քաղաքական իրադարձություններ, որոնք նպաստեցին քրդական գործոնի դերի աճին:

Իրաքի ռեժիմի դեմ նախապատրաստվող պատերազմը հղի էր դժվար կանխատեսելի հետևանքներով, որոնցից ամենավտանգավորը Հարավային Քուրդիստան Թուրքիայի ներխուժման ծրագիրն էր: Քրդական շարժման ղեկավարները, մասնավորապես, Մասուդ Բարզանին, վճռական հանդես եկան որպես պատերազմի (ԱՄՆ-ի կողմում) մասնակցելու նախապայման Հարավային Քուրդիստան շուրջ 100 հազարանոց թուրքական զորք մտցնելու Անկարայի պահանջի դեմ: Ընդ որում, Մասուդ Բարզանին հայտարարեց, որ եթե թուրքերը դիմեն այդ քայլին, «մենք վճռականորեն կպաշտպանենք մեր տարածքը»: Հասկանալի էր, որ ԱՄՆ-ը ստեղծված առանց այն էլ բարդ իրավիճակում չէր կարող թույլ տալ «թուրք-քրդական ռազմական կոնֆլիկտը»: Քրդերի վճռական դիրքորոշումը ոչ երկրորդական դեր խաղաց «ազատ կղզյակ» թուրքական ներխուժման վտանգի կանխարգելման մեջ: ԱՄՆ-ը, Անգլիան և հակասահմանադրական դաշինքի մասնակիցները հանդես եկան Հարավային Քուրդիստան զորքեր մտցնելու Անկարայի պլանի դեմ: Ուշագրավ է, որ ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների հետ Իրաքի դեմ պատերազմի հարցում առճակատման մեջ գտնվող երկրները՝ Ֆրանսիան, Գերմանիան, Ռուսաստանը և Եվրոպական մի շարք երկրներ նույնպես կտրականապես հանդես եկան թուրքական ծավալապաշտական ծրագրի դեմ:

Ավելացնենք, որ թուրքական կառավարող շրջանների այս պլանները կտրուկ մերժվեցին արաբական երկրների կողմից: Այսպիսով, Թուրքիան գտնվեց չեզոքացված վիճակում ոչ միայն տարածաշրջանի, այլև ՆԱՏՕ-ի գծով իր դաշնակիցների կողմից: Թուրքիայի համար աննպաստ հիշյալ գործընթացն ավելի խորացավ Անկարայի կողմից ԱՄՆ-ի զորքը Թուրքիայում տեղադրելու Վաշինգտոնի խնդրանքի մերժման պատճառով: Դրա հետևանքով խոր ճգնաժամ ապրող թուրքական տնտեսությունը գրկվեց ամերիկյան 30 միլիարդ դոլարի օգնությունից ու արտոնյալ պայմաններով վարկից: Եվ Թուրքիայի դերի հետ կապված վերջին պարագան: «Իրաքի հյուսիսային ճակատում» թուրքական զորքերի փոխարեն ամերիկյան զինուժի հետ համագործակցելով, հաջողությամբ իրենց առաջադրանքները կատարեցին քրդական զինված ուժերը, ինչը զգալի փոփոխություններ մտցրեց տարածաշրջանում ուժերի տեղաբաշխման և ունեցած դերի մասին պատկերացումների մեջ: Սկիզբ առավ ավանդաբար Թուրքիային վերագրվող դերի նվազում և թուրք-ամերիկյան ու թուրք-արևմտաեվրոպական

հարաբերությունների որոշ սառեցում: Հանգամանք, որ, բնականաբար, բարենպաստ ազդեցություն ունեցավ քրդական գործոնի նշանակության աճի վրա:

Հանգամանալի ծանոթությունը Հարավային Քուրդիստանի իրավիճակին և տեղի ունեցող գործընթացների վերլուծությունը հիմք են տալիս արձանագրելու, որ երկրամասը ներկա պահին համարվում է աշխարհի ամենադյուրաշարժ շրջաններից մեկը, որտեղ տեղի են ունենում շատ ուշագրավ վերափոխություններ, որոնց բնույթն ու զարգացման միտումների նշանակությունը դուրս են գալիս տեղական սահմաններից:

Մեկ հոդվածի շրջանակներում դժվար է ներկայացնել Հարավային Քուրդիստանում տեղի ունեցող իրադարձությունների ամբողջությունն իր բազմազան բնույթով: Ինչպես իրենց ծավալով, այնպես էլ բնույթով այստեղի վերափոխությունները աննախադեպ են քրդական ազատագրական շարժման պատմության մեջ: Քրդական «Ազատ կղզյակը» դեռևս պետք է հաղթահարի մի շարք ներքին և, առավել ևս, արտաքին դժվարություններ, որոնք կապված են հարևան մի քանի պետությունների հակաքրդական կեցվածքի հետ:

Դրա հետ առկա են մի շարք գործոններ, որոնք դրականորեն տարբերում են Հարավային Քուրդիստանը կոնֆլիկտային մյուս տարածաշրջաններից կամ պետական միավորումներից, ինչը հիմք է տալիս կանխատեսելու այստեղ գործընթացների բարեհաջող զարգացումը:

Ամենից առաջ քրդական ազգային ուժերի, ինչպես նաև արաբական առաջադեմ հասարակայնության նվաճումների թվին պետք է դասել այն կարևորագույն իրողությունը, որ երկարատև զինված կոնֆլիկտը Քուրդիստանում չհասցրեց ազգային-էթնիկական թշնամանքի, անհանդուրժողականությանը՝ արաբների և քրդերի միջև: Չնայած կոնֆլիկտի բարդ և երկարատև բնույթին և կառավարող ռեժիմի կողմից քրդական շարժման դեմ գործադրած դաժան պատժամիջոցներին, քրդական ազգային ժողովրդավարական ուժերի հարաբերությունները, ինչպես Իրաքի արաբների, այնպես էլ արաբական մյուս երկրների հետ ընդհանուր առմամբ բնութագրվում են թշնամանքի և անհանդուրժողականության բացակայությամբ, իսկ մի շարք դեպքերում կարելի է խոսել երկու ժողովուրդների բարեկամության և փոխըմբռնման մասին: Բուն Իրաքում և արաբական երկրներում զգալի կշիռ ունի հասարակայնության այն մասը, որը ըմբռնումով է ընկալում Իրաքյան պետության մեջ ազգային ինքնավարության քրդական պահանջը: Երկրորդ. քրդերը Իրաքյան պետության կազմից դուրս գալու պահանջ չեն առաջադրում, ինչը նրանց հիմնահարցը դարձնում է դյուրին և իրականանալի ու բացառում քաղաքական լուրջ ցնցումները: Հատկանշական է, որ գնալով ավելի լայն ճանաչում է ստանում այն գաղափարը, ըստ որի, քրդական փաստորեն գոյություն ունեցող ինքնավարությունը ոչ թե կյթուլացնի, այլ ընդհակառակը՝ կուժեղացնի Իրաքի դիրքերը, ինչպես տարածաշրջանում, այնպես էլ միջազգային արենայում ընդհանրապես: Ի հետևանք դրա, քրդական հիմնահարցը Իրաքի վրա ճնշում գործադրելու գործոնից կվերածվի այն երկրների վրա ճնշում գործադրելու միջոցի, որտեղ գոյություն ունի քրդական չլուծված ազգային հիմնահարցը: Երրորդ. ոչ միայն քրդական ազգային ազատագրական պայքարի արդարացի բնույթը և առաջադրած պահանջների օրինականությունը,

այլև մեծ չափով Հարավային Քուրդիստանի ազգային պետական իշխանությունների քաղաքականության բնույթը, գոյություն ունեցող դեմոկրատական ազատությունները, ազգային և կրոնական փոքրամասնությունների իրավունքների հարգումը, հասարակական-քաղաքական և տնտեսական բարեփոխումների մարզում ձեռք բերված նվաճումները ապահովել են երկրամասի միջազգային լայն շփումները՝ սկսած ՄԱԿ-ի և միջազգային այլ կազմակերպությունների հետ բազմաբնույթ կապերից մինչև Հարավային Քուրդիստանի ղեկավարների հաճախակի հանդիպումները մեծ տերությունների և տարածաշրջանի երկրների բարձր ղեկավարների հետ:

Հարավային Քուրդիստանի այժմյան վիճակը ձեռք է բերվել թանկ գնով: Այն քրդական ազգային ուժերի համառ ու տևական պայքարի արդյունքն է: Տարածաշրջանը, որտեղ տեղի ունի այս ամենը, բարդ է և անկանխատեսելի: Այդ նշանակում է, որ երկրամասի հետագա դեմոկրատական զարգացման ապահովման համար անհրաժեշտ է ոչ միայն իրաքյան պետության կողմից Քուրդիստանի ներկա կարգավիճակի վերջնական ճանաչումը, այլև իրադարձությունների ընթացքի փոփոխումը բացառող միջազգային որոշակի և կայուն երաշխիքներ:

САМООПРЕДЕЛЕНИЯ ЮЖНОГО КУРДИСТАНА НА СОВРЕМЕННОМ ЭТАПЕ

МГОЯН Ш. Х.

Академик НАН РА

Резюме

После известных событий начала 90-х годов прошлого века в зоне Персидского залива движение курдов за самоопределение в Ираке вступило в новый этап развития. Посредством свободных, демократических выборов в 1992 г. были созданы органы национальной государственности - Курдский парламент и правительство. В самоуправляемом курдском регионе произошли крупномасштабные политические и социально-экономические преобразования. В условиях политического плюрализма функционируют около двух десятков партий, отражающих всю палитру политической жизни региона. По показателям экономического роста, материального благосостояния, здравоохранения, демографической ситуации, образования и сети культурных очагов этот регион превзошел не только другие части разделенного Курдистана, но и некурдские районы соседних государств.

Борьба курдов Ирака за самоопределение в государстве с федеративным устройством получает одобрение и поддержку в кругах ООН, в европейских странах.